

Յունաց զէմ՝ մեծ ասելու թիւն և հակակրութիւն տարածուելով, և ուսմանց ասպարէզը անձուկ շրջանի մէջ մնաց. բայց ոչ երբէք ազգային և կրօնական հարադատ դաստիարակութեան և եկեղեցւոյ պայծառութեան համար թուրութիւն պատճառեցին, չնայելով՝ որ թէպէտ երբեմն թշնամիք կրնկձէին և ամօթապարտ կղաղարէին չարամիա մեքենայութիւններէ, սակայն երբեմն միմեանց կ'յաջորդէին ուրիշ թշնամի ազգեր ևս տիրապետութեան և երկրակալութեան հետեւելով, նոքա ևս կ'յաճախէին կրօնից և աղբութեան զէմ մարանչելոյ, թէ և միշտ անյաջող կիշնէին:

Ինչպէս Հինգերորդ, նոյնպէս Աւեցերորդ և Աօթներորդ դարուց մէջ այսպիսի տեսարաններու նկարագրութիւնք լիովին կաւանդուին մեր ազգ. և եկեղ. պատմութեանց մէջ, յորս կերեւին դարձեալ եկեղեցւոյ և եկեղեցական պաշտօնէից վիճակ և ջանքեր, որք ոչ մի արկածից առջև վհատիլ չունեցան, և ընդհակառակն անխոնջ և առաւել ոգևորուած կգործէին, և միշտ ազդի և եկեղեցւոյ օգուտը կ'սորհէին և կ'պաշտպանէին:

Բազրատունեաց իշխանութեան պայծառ ժամանակին մէջ անգամ այնքան արգիւնաւոր չեղաւ եկեղեցւոյ վիճակը՝ որքան հայաժամանաց միջոցին. և եկեղեցական նուիրապետութիւն միշտ և ամեն ժամանակ իւր պարտքը քաջ կ'ձանաչէր և ի գործ կ'գնէր ամեն տեսակ նեղութիւններ և հարստահարութիւններ կրելով հանգերձ:

Որոք մի նշանաւոր տպացոյց լինելոյ համար թող ընթերցողն ուշադրութեան

և բաղդատութեան տոնու Աօթներորդ դարու մէջ Հայոց եկեղեցւոյ վիճակը, և թէ եկեղեցական նուիրապետութիւն և ժողովուրդ ինչպէս սիրով միացած էին և կ'մտիթարէին զմիմեանս, — ինչպէս նա և յիշեալ դարուն մէջ (ի 645 թուին) Շ Նուր կոչեցեալ Վերսէս Աթուղիկոս Արևիկեցւոյ և Ազգի օգտին համար հոգացած միջոցին՝ Ղուենայ Հինգերորդ Ժողովոյն մէջ երրորդ յօդուածով յիշեցոյց ազգային դաստիարակութեան նշանակութիւնը և անհրաժեշտութիւնը՝ ևս և պարտաւորութեանց մէջ սահմանադրեց, որ « Ապիսկոպոսն այցիլութիւն արասցէ ի վիճակի իւրում ի վանորայս, է դպրոցս, և ի հիւանդանոցս », և ըն, ինչպէս որ ի նախնեաց հետէ ևս կարգաւորուած էր, որ և յաւէտ ամեն Ապիսկոպոսաց միանգամայն եկեղեցւոյ ամեն պաշտօնէից մեծ պարտաւորութիւններէն զխաւորագոյնն էր և է ամեն ժամանակ և ամենայն տեղ:

(Շարունակելէ)

ՊԱՆՏՈՍ ՎԱՐՄԱՅԵՏ ՄԱՆՈՒՆԻ:

**ՊԱՏՄԱԿԱՆ**

**ՅԻՉԱՏԱԿԱՐԱՆ**

Ի ՎԵՐՍԵՏ ՏԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐՕՆԻ

ՆԱԽԻՆ ՀՆՅՈՑ

(Շարունակելէ):

ԺԳ. — Բայ ի երկրի խնամակալ չաստուածներից ժողովուրդը ունէր նա և իւր մասնաւոր չաստուածութիւնքը, որ էին մի

և նոյն ժամանակ աւարկայ երկիւզի և յուսոյ: Եւ աջ ընդունում էին մի ստոր ողի կամ կատարիչ ճակատագրաց, որ կոչում էին *Բրոյ* այս ինքն արշանաբրոյ: Եւ բամազդ նրան յանձնել էր հսկելու մարդկանց վարմունքին և տեղեկագրել կենաց մատենի մէջ նոյա բոլոր վատ և բարի գործերն. քրմերն տալիս էին նորան նաև Երամազդի ատենադպիր մականունն և կարծել էին տալիս ժողովրդեան թէ՛ նա է որ գալիս էր ճակատագրից սահմանուած կեանքի վերջին ժամանակում բարձրացնել հեազհետէ ոգիներն և նորանց տանել իւր արձանագրի հետ ի միասին երկնային ատենի առաջ՝ լսելու համար յետոյ վերջին դատաստանն նրանց ամեն մէկի վերայ: Ազարդչապատ քաղաքի մօտ շինուած մի աւանում կար մի մատուռ ընծայուած այս գրող շաստուածուն, որին կոչում էին *Պուռ*: Եւ յն քրմերն՝ որ ծառայում էին այդ մատուռին՝ պահանջում էին ճանաչել ապագան և մեկնել երազն՝ խորհրդակցելով այդ շաստուծոյ պատգամի հետ: Եւ յն համբաւով որ նորա ստացել էին այդ զիտութեան մէջ, այն աւանն ուր որ նորա բնակվում էին՝ կոչուած էր *Երազմայն*, որ նշանակում է երազի *Բեշնոյ* \*):

Ժ.Լ. — Մի ուրիշ ողի՝ կոչուած *Ճիւտ* պուցանում էր մի երկահեկնցալ (*Չրայն* և *հոլայն*) շաստուածութիւն, որ բնակվում էր երբեմն երկրի և երբեմն ջրերի վերայ: Ան նախագահումէր գեաերի առատութեան, գաշտերի պողաբերութեան, ա-

րուեստագիտութեան, վաճառականութեան, երջանկութեան և օգտաւէտ ձեռնարկութեանց յաջողութեան վերայ: Մի անգամ տարին նա երևումէր մի քանի մարդկանց՝ որ իրեն հաճոյ էին թուել և այս պատահումէր գարնան սկզբում: Եւ յս երկրի պառաւ կիներն այսօր ևս հաւատում են նրան և պատմում են վէպեր ի մասին այդ ժողովրդական շաստուծոյ ազգու զօրութեանց:

Ժ.Չ. — Մի երրորդ շաստուածութիւն կոչուած *Յաւերթահարան*, այս ինքն մըշարնջնաւոր հարո, էր գեղեցիկ սեռի պահպանիչ շաստուածուհին. կարծում էին որ իւրաքանչիւր ամուսնացած կին ունէր իւր անձի համար պահապան մի *Յաւերթահարան* և համարում էին որ այս շաստուծոյ թիւն պիտի անհամար լինէր: Բնա կարծեաց ժողովրդեան՝ այս տեսակ յաւերթահարաններն միշտ աներևութաբար ներկայացած էին ամուսնական սենեակների, լուացման, հոտաւէտ, և օխկնանց զարդարանքի ծառայող տեղերում: Աորա նախագահում էին ծննդաբերութեան և ծննդեանց ցաւերին: Ման էին գալիս հասարակօրէն պարանգնների, անատուակների և աղբիւրների կողմում, ընկերանում էին կանանց՝ նորանց բազնիս գնալու ժամանակ: Բազում Հայ կանայք կարծում են զեռ ևս այսօր այս ցնորական էակի գոյութեան վերայ, համարում են որ այս շաստուածուհւոյ ամենահաճոյ տեղն բաղնիսն է: Պատմում են հազար տեսակ զբարձական զխպուածներ և վէպեր պարահանդէսի, հիացուցիչ երաժշտութեան, շնորհաց և այն փայլուն միտորութեան վերայ, որ այս շաստուածութիւնքն ունէին

(\*) Զեսագիր Յ — 51. Թիւթ 269

Հասարակօրէն բաղնիսներում, եռանդով տենչում են նոցա վիճակը, և նորանց կոչում են յատկապէս Բեյլէ ալէկէնէր, որ տեղ է ըստ դրականութեան՝ մեղանից աւելի երջանիկ էակներ. ըստ նախկին սովորութեան յարատեարար պահուած մինչ մեր օրերն՝ Մեծ Հայաստանի բազում դաւառների կանայքն՝ անում են տարին երկու անգամ մի տեսակ ևս Առնոսեան տօներ ի պատիւ այդ չաստուածոց: Այդ լինում է Հասարակօրէն Մայիս և Հոկտեմբեր ամիսներում, յորում ժամանակի սովորութիւն ունին տօնել այդ քաղաքային տօներն իւրեանց մէջ բաղնիսների շրջապատում: Այդ օրերում արդէրում են մարդկանց մտանել ի բաղնիս՝ որ միայն տահմանուած է իւրեանց համար, և այն տեղ միայն կանայք և աղջկունք կարող են ներս գնալ: Մի քանի տեղերում մուտքն թոյլատրուած է նա և երկոտասանամեայ կամ հնգետասանամեայ տղայոց, որք զալիս են իւրեանց մօր մօտ: Դողովը սկսում է առաւօտուայ տասը ժամին և տեւում է մինչ ի մտանելն արեղական և կամ երբեմն աւելի ուշ, անց են կացնում իւրեանց ժամանակը պարի, երաժշտութեան, լուսցման և ուտելիաց մէջ. բաղնիսների զանազան սենեակներն՝ որ հասարակօրէն շատ ընդարձակ են, որոշուած է այդ տեսակ զուարճութեանց համար: Իւրաքանչիւր կին բերել է տալիս իւր տունից համեղ կերակուրներ, և ընտիր ըմպելիքներ, բայց բոլորն դրվում է մի հասարակաց սեղանի վերայ, և ժողովուած կանայքն ուտում են նաև առանց խտրութեան: Այլ ժամանակներում կանայք կրում են մի տեսակ

գոգնոց մետաքսէ, բայց այդ երկու տօնի օրերում՝ նոքա պիտի թողնեն այդ գոգնոցն, բոլորովին մերկանում են և միմեանց տալիս են քոյր անունն:

ԺԵ. — Հինգերորդ դարուայ մի մասնազիր յայնում է մեզ՝ որ իւր ժամանակուայ ժողովրդեան կարծիքն համարումէր որ այս չաստուածուհիքն մահկանացու էին, որ նոքա ունեցած էին մի ըսկիզբն, և թէ իւրեանց կենաց վերջը պիտի լինէր մահուամբ\*): Բայց երկրի բերպաշտ կանայքն ունին երկու զանազան կարծիք այդ ցնորական էակներն երջանիկ գոյութեան վերայ: Մի քանիսն կարծում են որ այս չաստուածուհոց ժողովի մէջ՝ կայ միշտ բաւականին շատ արուստուածութիւններ, որ զարգարուած են բնութեան բոլոր ընծաներով, և ապրում են ի միասին չաստուածուհիների հետ. նոքա կարծում են թէ երկաքանչիւրն էլ մահկանացուք են ինչպէս մարդիկ, այլ կանայք ընծայում են մի ծնունդ կամ մի սկիզբն այդ չաստուածուհոց, բայց կարծում են որ նրանք երբէք չեն մեռանում, որ նոցա գոյութիւնն անեղծ է, և որ նոքա պահում են մշանջինաւորապէս իւրեանց երիտասարդութիւնն և առոյգութիւնն, և թէ չեն ընդունում ոչ մի արու էակ իւրեանց մէջ, որ նորանց երանութիւնն լինում է մի մտաւորական և անխռով զգայասիրութեան մէջ: Արական չաստուածներն, որ ապրում էին այս յաւերժահարսների հետ, բազմատեսակ էին, մի քանիսն մարդկային կերպարանք

(\*) Նշելիկ Ասորայի էջ 86:

ունէին, բայց էին մեծայաղթ հասակով, և սիրում էին անցկացնել իւրեանց ժամանակն նոցա հետ անտառների, պարտեզների մէջ, և քաղաքների և դիւղերի կործանուած կայանների վերայ, դոքա կոչուած էին Պայտ, և համարվում էին որպէս պաշտպանիչ չաստուածք՝ ընդդէմ վիշապաց և ընդդէմ վայրենի գազանաց: Կորանց տալիս էին այդ գազանաց նուաձման զօրութիւնն, կարծում էին որ նոքա շատ անգամ ստիպում էին վիշապներին գնալու ծառայել երկրագործներին հունձը տանելու համար ամբարներն, երբեմն նոքա առաջնորդում էին նա և ճանապարհորդներին դէպի բարի նուազանդիստն, մտանում էին մինչ անգամ քաղաքները և նրանց ընկերանում էին մինչ իւրեանց աներն: Արկորդ անտակների մարմնի վերին մասն մարդկային կերպարանք ունէր, բայց ստորին մասն ոմանք իշոյ, իսկ այլք ձիոյ կամ այլ կերպարանք: Յաւերժահարսանց ընկերներն սրոնք կազմում էին երրորդ անտակն, կոչվում էին Աղջերոսապալ: Չորրորդ անտակից մի քանիսն կոչուած էին Պարեկ՝ որ նշանակում է կաքաւող, և այլք Յուշիսպարիկ՝ որ տեսել է շնորհալի կերպի կամ կամայ պար էկոյ:

ԺԷ. — Հայերն ունէին նա և մի մասնաւոր չաստուածութիւն օրհնութեան կամ զոյից տաաութեան, որ կոչում էին Համբարոս, այս ինքն պահապան ամբարների և կամ ուտելեաց պաշարների: Մի այլ պահապան չաստուած՝ որ անուանում էին Շահապետ, այս ինքն գլխաւոր կամ պահապան շահերի կամ բերքերի, որ հոգում էր պողաքեր անելու գաշտերն և

գիւղերն: Մի երրորդ չաստուածու թիւն որ կոչում էին Ահանֆ, անդադար զբաղուած էր պահելու գետերի առատութիւնը, արգելելու հեղեղն և վնասնելու ծովային գազաններն:

ԺԻԹ. — Պատերազմականներն և բոլոր քաջ մարդերն՝ ունէին նա և իւրեանց մասնաւոր չաստուածութիւնն, որին երբեմն կոչում էին Տէկ՝ որ տակ է բարձր, իսկ երբեմն Արալեղ կամ Յարալեղ՝ այս ինքն ճարդ լող. կարծում էին որ այս չաստուածքն ամենավտանգաւոր վերքերն բժշկելու զօրութիւնն ունէին և կեանք էին պարգևում պատերազմի մէջ մեռնողներին: Հայաստանի պատմութիւնն յիշում է՝ որ իւր թագաւորաց մէկն կոչեցեալ Արայ, սպանուելով մի պատերազմի մէջ՝ որ տուել էր ընդ դէմ Շամիրամի, երկրի բնակիչներն խմբովին յոտի կանդնելով ի վրէժինդրութիւն իւրեանց իշխանի մահուան, Ասորիստանի հերոսուհին՝ որպէս զի խաղաղացնէ ժողովուրդն, նրանց կարծեցնել տուաւ որ Տիկերն Արայի վերքերն ծծել էին և նրան յարութիւն էին տուել \*):

(Մնացեալն է յետագայա):

Թ. ՕՐ. ՍՕՅԻՔ ԱՌԱՔԵԼԵԱՆՏ.

(\*) Մոլոկո Խօր. զերբ Ա. գլխ 14.